ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

4 մարտի երեքշաբթի 2025
տպագրության ԺԴ տարի

27
(3058)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԵՐԵՎԱՆԻ ՍՐՏՈՒՄ ԿԿԱՌՈՒՑՎԻ ՀԱՄԱԼԻՐ. ԿՈՌՈՒՊՑԻԱՆ ԵՎ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՊԵՐԸ

Փետրվարի 24-ին կայացած Երեւանի քաղաքապետարանի գործակարգավարական նիստի ժամանակ Երեւանի քաղաքապետի խորհրդական Սոնա Թեւանյանը հայտարարել էր «Կասկադի վերակառուցման» ծրագրի հաղթող կազմակերպության մասին (մրցույթը հայտարարվել էր հունվարի 17-ին, իսկ արդյունքներն ամփոփվել էին փետրվարի 17-ին), սակայն ավագանու որոշում այս մասով չկայացվեց: Միայն հայտնի է, որ կոռուպցիոն շղթաների ակնհայտ դրսեւորումներով Երեւանի սրտից մեծ տարածք տրվել է Փաշինյանի «սրտի» գործարարին:

Մինչ մանրամասներին անդրադառնալը, նշենք, որ «Կասկադ» համալիրը հանդիսանում է Երեւանի ճարտարապետական ժառանգության բացառիկ նմուշներից մեկը, եւ ՀՀ օրենսդրությամբ մշակութային ժառանգության պահպանման օբյեկտ է, իսկ 2018 թ.-ից ստացել է նորահայտ հուշարձանի կարգավիճակ: «Ժողովուրդ» օրաթերթը պարզեց նաեւ, որ Պատմության եւ մշակույթի անշարժ հուշարձանների եւ պատմական միջավայրի պահպանության եւ հեղինակային իրավունքը պաշտպանող օրենսդրության համաձայն՝ «Կասկադ» համալիրի կառուցված մասի ճարտարապետական նախագծում արգելված է կատարել փոփոխություններ առանց լիազոր մարմնի՝ ԿԳՄՍ նախարարության համաձայնության:

Պաշտոնական հայտարարություններում որեւէ տեղեկություն չկա այն մասին, թե ԿԳՄՍՆ-ն ինչ դիրքորոշում է տվել Երեւանի մշակութային ժառանգություն համարվող տարածքի վերաբերյալ: Միայն հայտնի է, որ Տիգրան Ավինյանը միանձնյա կամ նեղ շրջանակով որոշել է մրցույթի ելքը. «Կասկադի» հարակից տարածքները պետք է տա 2018-ից հետո շեշտակի հարստացած գործարար Գրիգոր Տեր-Ղազարյանին:

Իսկ ով է Գրիգոր Տեր-Ղազարյանը: Նա «Ջի Թի Բի դիվելոփմենթ» ՍՊԸ-ի հիմնական բաժնետերն է: Այդ կոնսորցիումը հիմնադրվել է 2024թ. հոկտեմբերի 24-ին, որի 97.5% ը պատկանում է Գրիգոր Տեր-Ղազարյանին, 1,5%-ը՝ ԱՄՆ քաղաքացի Բոբբի Սինգ Կանգին, իսկ 1% մասնակցություն ունի Հնդկաստանի մի քաղաքացի՝ Սուլախան Սինղը: Գրիգոր Տեր-Ղազարյանը «Հանրապետություն» կուսակցության առաջնորդ Արամ Սարգսյանի եղբոր՝ Արմեն Սարգսյանի փեսան է:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

Փետրվարի 27-ին Գյումրու քաղաքապետի թեկնածու Վարդան Ղուկասյանը տեսաուղերձի ժամանակ մի ուշագրավ ելույթով հանդես եկավ՝ ասելով. «Եթե ինձ, իմ ընտանիքին, իմ հարազատներին խփեն, դա կանի Սերժ Սարգսյանը, ուրիշ ոչ ոք»: «Ժողովուրդ» օրաթերթը կապ հաստատեց Վարդան Ղուկասյանի հետ՝ հասկանալու, թե ինչու է նման մերկապարանոց պնդում անում: Վերջինս արձագանքեց. «Ինչ ասել եմ՝ ասել եմ, էլ չեմ անդրադառնում: Թող մնա իմ մեջ, ու մեկ էլ Աստված գիտի: Դրան չեմ անդրադառնում, ինչ ասել եմ՝ վերջ: Մեր հարցին, թե ինչու է տալիս հենց Սերժ Սարգսյանի անունը, Նիկոլ Փաշինյանից արդյոք չի տեսնում վտանգ, քաղաքապետի թեկնածու Ղուկասյանն արձագանքեց՝ «Ինչո՞ւ եք խորացել, հետաքրքրվում եք: Դրան չեմ անդրադառնում, ինչ ասել եմ՝ ասել եմ: Վերջ»:

«Ժողովուրդ» օրաթերթի ՔՊ-ամերձ աղբյուրները փոխանցում են, որ Անդրանիկ Քոչարյանի փաստացի շանտաժները թիմի ներսում շարունակվում են: Պարզվում է, որ ամիսներ շարունակ Քոչարյանից տարբեր «խողովակներով» պահանջում են ներկայացնել 44-օրյա պատերազմի դեպքերն ուսումնասիրող հանձնաժողովի զեկույցը, սակայն նա չի տալիս: Հիշեցնենք, որ այդ զեկույցի հանրայնացման համար օրենքով նախատեսված բոլոր ժամկետները կրկնակի անգամ խախտվել են: Անդրանիկ Քոչարյանը պարզապես չի ներկայացնում այն ՀՀ Ազգային ժողով: «Ժողովուրդ» օրաթերթը Ազգային ժողովից տեղեկացավ, որ նախագահի անունով Անդրանիկ Քոչարյանը դիմում չի ներկայացնում: Ըստ մեզ հասած տեղեկությունների՝ անգամ ՔՊ վարչության նիստի ժամանակ, երբ քննարկվել է հարցը, Նիկոլ Փաշինյանը հորդորել է իր անունից պահանջել զեկույցը, բայց Անդրանիկ Քոչարյանն անդրդվելի է: Տեղեկացանք, որ վերջերս ԱԺ ՔՊ խմբակցության պատգամավոր Վիլեն Գաբրիելյանն է գնացել Քոչարյանի մոտ՝ պահանջելով տրամադրել զեկույցը, որ տեղեկանա, թե ինչ է գրված, եւ ՔՊ վարչություն գնա ներկայացնելու փաստաթղթի մասին: Սակայն Անդրանիկ Քոչարյանը նրան տվել է մի թուղթ՝ պահանջելով, որ ստորագրի այն մինչ փաստաթղթին ծանոթանալը, որպեսզի զեկույցի նախագծին ծանոթանալուց հետո տեղեկությունները չկիսի որեւէ մեկի հետ: Գաբրիելյանը հրաժարվել է ստորագրել Քոչարյանի առաջարկած փաստաթուղթը՝ ասելով, որ իր ծանոթանալու նպատակը կուսակցական ընկերներին ներկայացնելն է, այլ ոչ թե գաղտնի ծանոթանալն ու տուն գնալը: Այսպիսով, Անդրանիկ Քոչարյանը խորհրդավորության շղարշով է պատել զեկույցը եւ հրաժարվում է դրա նախագիծը տրամադրել որեւէ ՔՊ-ականի: Անգամ Նիկոլ Փաշինյանի միջամտությունը որեւէ արդյունք չի տվել. նա զեկույցը պինդ պահում է, քանի որ գիտի՝ հենց ներկայացրեց, կարճ ժամանակ անց իրեն կհեռացնեն ԱԺ-ից: Մենք փորձեցինք կապ հաստատել Քոչարյանի հետ, սակայն պատգամավորը մեր զանգերին չպատասխանեց:



Արմեն Սարգսյանը, որ Եռաբլուր պանթեոնի հողերի սեփականաշնորհման հիմնական «դերակատարն» է, Նիկոլ Փաշինյանի սիրելին ու վստահելին է վաղուց: «Ժողովուրդ» օրաթերթը պարզեց, որ 2018-ի սեպտեմբերի 22-ին Նիկոլ Փաշինյանն այցելել է նրան պատկանող «Արարատի» գինու գործարան: Հիշեցնենք, որ Եռաբլուրի հողերի վաճառքի գործով է անցնում ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության եւ զորքերի բնակավորման վարչության երկարամյա պետ Արմեն Սարգսյանը: Նրան հիմա դատախազությունը 19 դրվագով մեղադրում է Եռաբլուրի հողերը սեփականաշնորհման միջոցով օտարելու համար: Բայց Նիկոլ Փաշինյանն ԱԺ ամբիոնից բղավում էր ընդդիմադիր պատգամավոր Աննա Գրիգորյանի վրա, թե «Եռաբլուրի հողերը ծախել եք»: «Ժողովուրդ» օրաթերթը պարզեց, որ հեղափոխության տարում Նիկոլ Փաշինյանն այցելել է «Արարատի» գինու գործարան, շրջայց կատարել կոնյակի հնացման, տեսակավորման, շշալցման, փաթեթավորման արտադրամասերում: Ընկերության ղեկավարությունը երկրի վարչապետին է ներկայացրել ընթացիկ եւ նախատեսվող աշխատանքները, ինչպես նաեւ հետագա ներդրումային ծրագրերը: Այս այցը ինչու է կարեւոր, քանի որ երբ Փաշինյանը վարչապետ դարձավ, այցելում էր այն ձեռնարկություններ, որոնց սեփականատերերի հետ ուներ ջերմ հարաբերություններ: Եվ ահա Արմեն Սարգսյանը այդ շարքից է: Շարունակելի...

ՀԱՅԱԴՈՒԼԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

ՄԵՐ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԸ ԱԼԻԵՎՅԱՆ ՌԵԺԻՄԻ ԳԵՐԻՆԵՐՆ ԵՆ

Մարտի 1-ից Ազատության հրապարակում ի պաշտպանություն Ռուբեն Վարդանյանի հացադուլ սկսած Մանե Թանդիլյանի ինքնազգացողությունը, երեկվանից սկսած, վատ է: ArmLur.am-ի թղթակիցը, ով երեկ Ազատության հրապարակում այցելել էր Թանդիլյանին հայտնել է, որ բժիշկները փորձում են Թանդիլյանի առողջական վիճակը բարելավել (3.03.2025), և թույլ չեն տալիս նրա հետ զրուցել: ArmLur.am-ը այս ընդվզման վերաբերյալ զրուցել է «Ադրեալու երկիր» կուսակցության նախագահ Մեսրոպ Առաքելյանի հետ:

-Պարոն Առաքելյան, Մանե Թանդիլյանը հացադուլ է սկսել Ազատության հրապարակում: Նա խնդրում, հորդորում է Ռուբեն Վարդանյանին, որպեսզի վերջինս Բաքվում եւս դադարեցնի իր հացադուլը: Ըստ Ձեզ՝ ի՞նչ է սա տալու:

-Տիկին Թանդիլյանը եւ մեր երկու ընկերները՝ Վարդանը եւ Արտավազդը, արդեն 3-րդ օրն է (3.03.2025 դրությամբ) հացադուլ են անում: Դա որպես խնդրանք ենք ներկայացնում Ռուբեն Վարդանյանին, որը արդեն տեւական ժամանակ է հացադուլ է անում: Մի քանի օր առաջ առկա լուսանկարներից պարզ դարձավ, որ նրա ինքնազգացողությունը դատական նիստի ընթացքում վատացել է, եւ ամեն օրն իր կյանքի համար կարող է անդառնալի հետեւաքներ ունենալ: Մենք հրավիրում ենք միջազգային հանրության ուշադրությունը, որ կոնկրետ արագ քայլեր ձեռնարկեն, որովհետեւ ակնհայտ է, որ մեր հայրենակիցները Բաքվում բացառապես ալիեւյան ռեժիմի գերին են: Այս կեղծ դատավարությունը որեւէ գործընթաց չի կարելի համարել եւ բավականին զարմանալի է, որոշ միջազգային գործընկերներ դատավարության պրոցեսից են խոսում կամ այս հարցի լուծումը դիտարկում հայադրբեջանական հարաբերությունների համատեքստում, քանի որ ակնհայտ է, որ սա միակողմանի խնդիր է՝ Հայաստանում որեւէ ադրբեջանցի գերի չկա: Սա նաեւ պետք է դիտարկել մարդու իրավունքների բոլոր կոնվենցիաների համատեքստում՝ անկախ եկու երկրների միջեւ հակամարտություններից: Մեր նպատակ-խնդրանքն է ուղղված Ռուբեն Վարդանյանին, որպեսզի իր կյանքին սպառնացող վտանգից հետ կանգնի՝ շարունակելով պայքարը: Սա պայքարի գործիքներից մեկն է, այս միջոցով մենք ցույց ենք տալիս միջազգային հանրությանը, որ ժողովուրդն անտարբեր չէ՝ ի տարբերություն իշխանությունների: Ժողովուրդը պատասխանատու է իր հայրենակիցների նկատմամբ, աջակցում է նրանց:

-Պարոն Առաքելյան, արդեն 4-րդ օրն է ինչ Դուք գտնվում եք «Ազատության» հրապարակում, հասարակության արձագանքն ինչպիսի՞ն է: Հետաքրքիր է՝ ինչպե՞ս են վերաբերվում, մոտենում, աջակցություն հայտնո՞ւմ են: Հասարակությունն ինչպե՞ս է վերաբերվում Ձեր այս մոտեցմանը:

-Բավականին շատ մարդիկ են գալիս, քաղաքացիներ, հասարակական, քաղաքական գործիչներ, ակնհայտ է, որ բոլորն էլ մտահոգված են այն ամենով, ինչ հիմա տեղի է ունենում: Եթե թվում է, թե հասարակությանը չի հետաքրքրում, ակնհայտ է, որ անհատական իմաստով հարյուր հազարավոր քաղաքացիներ մտահոգված են այս հարցով: Նման ակցիաները շատ կարեւոր են, որպեսզի հասարակությունը համախմբված ներկայացնի իր դիրքորոշումը: Նրանք իրենց աջակցությունն են հայտնում, մեր այս քայլն էլ է աջակցություն՝ ուղղված Բաքվի մեր հայրենակիցներին: Նրանք աջակցության խնդիր ունեն, որովհետեւ բանտում գտնվելու փաստն արդեն իսկ շատ ավելի մտահոգիչ է, քան Երեւանում անցկացվող որեւէ հացադուլ:

-Դուք նշեցիք, որ սրա հիմնական նպատակը նաեւ միջազգային հանրության ուշադրությունը հրավիրելն է. եթե մեր իշխանությունը չի բարձրաձայնում այս խնդիրները, կամ բավարար չափով չի խոսում, այս դեպքում ի՞նչ ակնկալիքներ պետք է ունենալ միջազգային հանրությունից:

-Իշխանության անգործությունը չի նշանակում, որ ժողովուրդն էլ պետք է նրա վարքագիծը որդեգրի: Բավականին բարդ է անտարբեր իշխանության պարագայում գործողություններ կատարելը:

Զրուցեց ԶՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ՆՈՐԻՑ ԿԸՆՏՐԵՆ

ԿԱՊԱՆՈՒՄ ԿՐՔԵՐԸ ՉԵՆ ՀԱՆԴԱՐՏՎՈՒՄ

Փետրվարի 17-ին տեղի է ունեցել Կապանի տարածքային խորհրդի ընտրությունը, որի արդյունքները, ինչպես «Հրապարակ»-ն էր գրել, կեղծվել են:

Ընտրությունների արդյունքում ՔՊ-ական Նարեկ Ղահրամանյանն ու Մարինա Ղազարյանը դուրս են մնացել Կապանի խորհրդի կազմից, նրանցից ավելի շատ ձայն է հավաքել ՔՊ գրասենյակի քարտուղարուհի Սարվարդ Թումանյանը:

Տարածքային կառույցի ընտրություններին քվեարկած 77 կուսակցականներից 63 կողմ ձայն է ստացել Սարվարդը եւ զիջում է միայն ՀՊՄԿ-ում կառավարության ներկայացուցիչ ՔՊ-ական Նարեկ Բաբայանին, որն առաջատարն է 69 ձայնով:

ՔՊ-ում ընտրությունների այս կեղծման պատասխանատու եւ հիմնական դերակատար համարում են Նարեկ Բաբայանին:

ArmLur.am-ը այս ամենի վերաբերյալ մի քանի հարց է ուղղել Նարեկ Բաբայանին:

-Պարոն Բաբայան, ի՞նչ է տեղի ունեցել Կապանի ՔՊ խորհրդի ընտրություններում. ըստ տեղեկությունների՝ դրանք կեղծվել են, ինչի համար պատգամավորներ Նարեկ Ղահրամանյանն ու Մարինե Ղազարյանը չեն ընտրվել խորհրդի անդամ:

-Կապանի ՏԿ-ում ընտրությունները կայացել են ազատ եւ արդար միջավայրում: Նախընտրական քարոզարշավը նույնպես անցել է ջերմ եւ դրական մթնոլորտում՝ զերծ ցանկացած միջադեպերից:

-ՔՊ-ում Ձեզ համարում են ընտրակեղծարար, քանի որ խորհրդում հիմնականում անցել են ձեր մտերիմները: Որքանո՞վ են իրական այս տեղեկությունները:

-Կապանի ՏԿ-ում օտարներ չկան, բոլորը մտերիմներ են: Մենք բոլորս նույն քաղաքական թիմից ենք, եւ բոլորս հարգում ենք իրար: Անկախ նրանից, թե ովքեր են ընտրվել խորհրդում, մեր վերաբերմունքը եւ հարգանքը մեր չընտրված գործընկերների հանդեպ չի փոխվում: Բացի այդ, մեր չընտրված բոլոր գործընկերները շնորհավորել են ընտրված խորհրդին եւ պատրաստակամություն հայտնել համատեղ աշխատելու ու խնդիրները միասին լուծելու:

-Ըստ մեր տեղեկությունների՝ հնարավոր է, որ նորից ընտրություններ անցկացվեն՝ վերը նշվածի պատճառով, կա՞ն նման խոսակցություններ:

-Ես նման տեղեկություն չունեմ:

Զրուցեց ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ

ԱՐՓԻ ԴԱՎՈՅԱՆԻՆ ՉԵՆ ՎՍՏԱՀՈՒՄ

Չնայած, որ շաբաթական երկու անգամ ՔՊ կուսակցությունը Գյումրիի եւ Փարաքարի ընտրությունների հարցով նիստեր է անում, պարզվում է՝ սա էլ բավարար չէ: Շաբաթ օրը եւս ՔՊ-ականները, Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ, վարչության նիստ էին հրավիրել նույն օրակարգով: ArmLur.am-ը պարզեց, որ կուսակցության վերջին նիստերին ՔՊ-ում դերերն ու դերակատարները փոխվել են: Եթե նախկինում ամեն հարցում իրեն առաջին պլան էր բերում, օրինակ, ԱԺ ՔՊ խմբակցության պատգամավոր Արփի Դավոյանը, հիմա վերջինս ընդհատակ է անցել՝ ո՛չ ԱԺ-ում է ելույթներ ունենում, ո՛չ էլ ՔՊ նիստերին է մասնակցում: Դավոյանին ՔՊ-ի ներսում կատարվող իրադարձություններից մեկուսացրել են, ըստ ՔՊ-ամերձ աղբյուրների՝ նրա հանդեպ վստահությունը, կարելի է ասել, զրոյացել է: Դավոյանը վարչությունում անգամ այլեւս համախոհներ չունի: «Ժողովուրդ» օրաթերթը ավելի վաղ հայտնել էր, որ աջուձախ թիմակիցների նկատմամբ դավեր նյութելու, անհիմն մեղադրանքներ հնչեցնելու համար ՔՊ-ում Արփի Դավոյանին այլեւս «պերսոնա նոն գրատա» են հայտարարել, նույն կարգավիճակում է նաեւ նրա մտերիմ ընկերուհին՝ Լուսինե Բադալյանը: ArmLur.am-ը նկատեց նաեւ, որ համայնքային ընտրություններից առաջ վարչության այլ անդամներ եւս մի կողմ են քաշվել՝ Ալեն Սիմոնյանը, Տիգրան Ավինյանը, որոնք ՔՊ հիմնական դեմքերն են համարվում:

Փոխարենը բավականին ակտիվացել է ՔՊ-ի Գյումրու թեւը՝ Էմմա Պալյանը, Դավիթ Առուշանյանը, Գյումրու ավագանու ՔՊ խմբակցության ղեկավար Քնարիկ Հարությունյանը եւ վարչապետի մամուլի քարտուղար Նազելի Բաղդասարյանը: ՔՊ գյումրեցի կանայք օրուգիշեր, միմյանց հերթ չտալով, գրառումներ են անում՝ սեւացնելով ընդդիմադիր թեկնածուներին:

ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԴՐՈՇՈՎ

Երեկ համացանցում հայտնվել էր մի տեսանյութ, որտեղ երեւում էր, թե ինչպես է մեքենան սլանում Արտաշատ տանող ճանապարհով՝ ծածանելով ադրբեջանական դրոշը: Ավելի ուշ ArmLur.am-ը ՆԳՆ-ից տեղեկացավ, որ տրանսպորտային միջոցը վարող անձի գործողություններում իրավախախտման հանգամանքները պարզելու եւ ըստ այդմ համապատասխան վարույթ նախաձեռնելու հարցը քննարկելու նպատակով՝ վարորդը տրանսպորտային միջոցով ներկայացվել է Համայնքային ոստիկանության Վաղարշապատի բաժին:

ԻՐԱՎԻՃԱԿ

ԻՐԱՆԸ ԲԱՐԴ ԻՐԱՎԻՃԱԿՈՒՄ Է

Նրանք, ովքեր հույսը դնում են Ամերիկայի Միացյալ Նահանգների եւ Եվրոպայի վրա, պետք է նայեն Ուկրաինայի ներկայիս վիճակին, X-ի իր էջում գրել է Իրանի գերագույն առաջնորդ Այաթոլլա Ալի Խամենեին՝ շեշտելով՝ Արեւմտյան երկրների աջակցության հույսը պատրանք է:

«Բոլոր կառավարությունները պետք է հասկանան սա, հատկապես նրանք, ովքեր հույսը դնում են ԱՄՆ-ի եւ Եվրոպայի վրա»,-ուկրաիներենով գրել է Խամենեին:

Իրանը հայտնվել է բարդ իրավիճակում, քանի որ ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի վարչակազմը կրկին սկսել է Թեհրանի նկատմամբ «առավելագույն ճնշման» քաղաքականությունը, իսկ Թեհրաննէլ հրաժարվում է Վաշինգտոնի հետ բանակցություններից: Նշվում է, որ երկրի տնտեսությունը ծանր վիճակում է: ՄԱԿ-ի որոշ պատժամիջոցներ թեեւ 2015-ին կնքված միջուկային համաձայնագրի շրջանակներում մեղմացվել էին, սակայն 2018 թվականին՝ Թրամփի օրոք, Ամերիկայի Միացյալ Նահանգները միակողմանի դուրս եկավ միջուկային համաձայնագրից եւ սահմանափակումներ մտցրեց Թեհրանի նկատմամբ:

ԻՆՔՆԱԶԳԱՅՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՏԱՑԵԼ Է

Ազատության հրապարակում արդեն 4-րդ օրը հացադուլում գտնվող «Ապրելու երկիր» կուսակցության նախագահ Մանե Թանդիլյանի ինքնազգացողությունը երեկ վատացել է:

Թանդիլյանի կուսակից ընկեր Վարդան Ավագյանի փոխանցմամբ՝ շտապօգնություն է եկել, ճնշման տատանում է արձանագրել եւ առաջարկել դադարեցնել հացադուլը:

Հիշեցնենք, որ Թանդիլյանը մարտի 1-ին հացադուլ է սկսել՝ որպես խնդրանք Արցախի նախկին պետնախարար Ռուբեն Վարդանյանին՝ «դադարեցնելու իր կյանքի համար անդառնալի սպառնալիք հանդիսացող հացադուլը»:

ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՅՈՒՐԱՅՄԱՆ ՓՈՐՁԻ ՎԱՐՈՒՅԹԸ

ArmLur.am-ը նախկինում հայտնել էր, որ Ազգային ժողովի նախկին պատգամավոր Ռուստամ Գասպարյանի եղբոր՝ Սերոբ Գասպարյանի գործը մտել է դատարան:

Տեղեկացնենք, որ այն քննվելու է Կոտայքի մարզի դատարանում, եւ քրեական գործը մակագրվել է դատավոր Գագիկ Հարությունյանին:

Նշենք, որ Սերոբ Ռաֆիկի Գասպարյանը մեղադրվում է այն բանի համար, որ մի խումբ անձանց հետ նախնական համաձայնությամբ կատարել է իշխանությունը յուրացնելու նախապատրաստություն, այն է՝ դիտավորությամբ ստեղծել է Հայաստանի Հանրապետության իշխանությունը զավթելու՝ բռնություն գործադրելու եւ բռնություն գործադրելու սպառնալիքի միջոցով Հայաստանի Հանրապետության Կառավարության լիազորություններին տիրանալու համար պայմաններ:

ԿԻԲԵՌՀԱՆՑԱԳՈՐԾՆԵՐԻ ԾՈՒՂԱԿ

Ի՞ՆՉ ԵՆ ՄՏԱԾՈՒՄ ՊԱՏԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Վերջին շրջանում շատ քաղաքացիներ ահազանգում են կիբեռհանցագործությունների վերաբերյալ, այն է՝ երբ առանց քաղաքացիների իմացության, քաղաքացիների անուններով գործարք է կատարվում բանկերում կամ վարկային կազմակերպություններում:

Armlur.am-ը զրուցեց «Հանրային վերահսկողություն» ՀԿ-ի նախագահ Միեր Կարագոզյանի հետ, ով այս օրերին փորձում է պաշտպանել կիբեռհանցագործության զոհ դարձած քաղաքացիների շահերը:

Կարագոզյանը տեղեկացրեց մեզ, որ արդեն 200-ից ավելի քաղաքացիներ դիմել են իր նախագահած հասարակական կազմակերպությանը այն մասին, որ իրենք հայտնվել են կիբեռհանցագործների ծուղակում: Մեզ հետ զրույցում Կարագոզյանը չբացառեց, որ կիբեռհանցագործության զոհերը իրականում կարող են լինել ավելին, սակայն ոչ բոլոր քաղաքացիներն են դրա մասին բարձրաձայնում: Իսկ կիբեռհանցագործությունը հետեւյալն է. քաղաքացիների անունով բանկերից վերցվում են վարկեր, որոնց մասին քաղաքացիները անգամ տեղյակ չեն լինում: ՀԿ-ի նախագահը մանրամասնեց, որ կան դեպքեր, երբ դեռ 2021 թվականից վերցվել է վարկ, սակայն քաղաքացին դրա մասին իմացել է, երբ դատական ակտերի հարկադիր կատարողականից այցելել են՝ բնակարանը բռնագանձելու նպատակով:

Փաստորեն, կիբեռհանցագործները խաբել են բանկերին, սակայն ֆինանսական ամբողջ բեռը կրում են անտեղյակ քաղաքացիները, որոնց մի մասն անգամ տեխնիկապես չէր կարող տալ համաձայնություն, որ իր անունով վարկ վերցնեն, քանի որ այդ քաղաքացիները չունեն իրենց անունով վարկ ձեւակերպելու համար անհրաժեշտ սմարթֆոններ: Կարագոզյանի համար անհասկանալի է, թե տվյալ դեպքում ինչո՞ւ է քաղաքացին կրում ֆինանսական բեռը:

«Այս հանցագործությունները երկրում արդեն զանգվածային բնույթ են կրում, քաղաքացիների իրավունքները չեն վերականգնվում՝ իբրեւ տուժողների»- ահազանգում է Կարագոզյանը՝ շեշտելով, որ իրենց նպատակն է պահանջել պատկան մարմիններից, որպեսզի վերականգնվեն տուժած քաղաքացիների իրավունքները:

Կարագոզյանը այս ամենի մեջ չի բացառում նաեւ բանկերի մասնակցությունը կամ շահագրգռվածությունը: Ըստ նրա՝ կան հիմնավոր կասկածներ դրա վերաբերյալ: Օրինակ, դրա մասին են խոսում դեպքերը, երբ քաղաքացին նախկինում ցանկացել է բանկից վարկ վերցնել, սակայն ինչ-ինչ պատճառներով նրան վարկ չեն տրամադրել, բայց երբ նույն քաղաքացու անունից վարկ են վերցնում կիբեռհանցագործները, այդ դեպքում «բարեհաջող» գործարք է կատարվում:

Կան դեպքեր նաեւ, երբ վարկ են տրամադրել այն սեւ ցուցակում գտնվող քաղաքացիներին, ովքեր եթե փորձեին վարկ վերցնել, ամենայն հավանականությամբ նրանց չէին տրամադրի, սակայն երբ վարկ են վերցրել կիբեռհանցագործները՝ սեւ ցուցակում լինելը խոչընդոտ չի հանդիսացել: «Առնվազն այս պատմությունների վրա հիմնվելով՝ ունենք լրջագույն կասկածներ»- ասում է Միեր Կարագոզյանը:

Կարագոզյանի համոզմամբ՝ այս ամենին պետական մարմինների արձագանքը բավարար չէ: «Իրենք իբրեւ թե ի վիճակի չեն, իբրեւ թե իրենց գործունեության տիրույթը չէ այդ իրավահարաբերությունները կարգավորել»: Բայց սա, հանրային գործչի գնահատմամբ, անընդունելի պատասխան է, քանի որ կիբեռհանցագործությունները սկսում են կրել զանգվածային բնույթ, եւ պատկան մարմինները պատասխանատու են կատարելու քայլեր՝ հանցագործությունները կանխելու նպատակով:

Իսկ առաջիկա ուրբաթ օրը՝ մարտի 7-ին, պատրաստվում են իրականացնել քաղաքացիական ակցիա Կենտրոնական բանկի դիմաց:

Մեր զրուցակիցը նաեւ կոչ արեց կիբեռհանցագործություններից տուժած քաղաքացիներին միանալ իրենց ակցիային:

ԱՐՄԵՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՀՐԱԺԱՐԱԿԱՆԻ ԴԻՄՈՒՄ

Իրանի նախկին արտգործնախարար Մոհամմադ Ջավադ Զարիֆը, որը նորընտիր նախագահ Մասուդ Փեզեշքիանի հրամանագրով անցյալ տարվա օգոստոսի սկզբին նշանակվել էր հանրապետության ռազմավարական հարցերով փոխնախագահի պաշտոնում, հրաժարական է տվել: Զարիֆի հնարավոր հեռանալու պատճառ կարող են լինել տարաձայնությունները՝ կապված երկրի կառավարության նոր կաբինետի կազմի հետ:

ՆՇԱՆԱԿՈՒՄ

Աշոտ Ժամկոչյանը նշանակվել է ՀՀ քննչական կոմիտեի տարածքային քննչական վարչությունների գործունեության վերահսկողության գլխավոր վարչության պետի տեղակալ:

ՍՊԱՍՈՒՄ ԵՆ ՊՈՒՏԻՆԻՆ

Թուրքիան ամենաբարձր մակարդակով հայտարարել է, որ սպասում է ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի այցին, սակայն կոնկրետ ժամկետներ առայժմ չկան: Այս մասին «ՌԻԱ Նովոստի» գործակալությանը հայտնել է Անկարայում բարձրաստիճան դիվանագիտական մի աղբյուր: «Մենք ամենաբարձր մակարդակով հայտարարել ենք, որ սպասում ենք հարգարժան Վլադիմիր Պուտինին», - ասել է գործակալության զրուցակիցը: Հարցին, թե երբ կարող է տեղի ունենալ ՌԴ ղեկավարի այցը Թուրքիա, աղբյուրը հաղորդել է, որ «կոնկրետ ժամկետներ չկան»: Ավելի վաղ Դաշնային խորհրդի խոսնակ Վալենտինա Մատվիենկոն, որը գտնվում էր Թուրքիայում, հայտարարել էր, որ այդ երկրի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը խնդրել է Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինին փոխանցել, որ Անկարայում սպասում են նրա այցին:

ՍՐԲԱԶԱՆԸ ԱՅՑԵԼԵԼ Է Մ. ԹԱՆԴԻԼՅԱՆԻՆ

Սրբազան պայքարի առաջնորդ Բագրատ արքեպիսկոպոս Գալստանյանն այցելել է Ազատության հրապարակում հացադուլի մեջ գտնվող «Ապրելու երկիր» կուսակցության համահիմնադիր Մանե Թանդիլյանին: Այս մասին հայտնում է «Սրբազան պայքար» թելեգրամյան ալիքը: Նշենք, որ Մանե Թանդիլյանը հացադուլ է հայտարարել՝ խնդրելով Բաքվի բանտում պատանդառված Ռուբեն Վարդանյանին դադարեցնել հացադուլը:

ՉԵԶՈՔ ՉՆՆՈՒՄ

ԿԽՄԿ-ի աշխատանքի ձեւաչափը չի ենթադրում հանրային քննարկում իր տեսածի վերաբերյալ: Այս մասին Կարմիր խաչի միջազգային կոմիտեի գրասենյակի դիմաց ի պաշտպանություն Ռուբեն Վարդանյանի եւ մյուս գերիների իրականացվող ակցիայի մասնակիցներին ասաց ԿԽՄԿ պատվիրակության հաղորդակցման ծրագրերի ղեկավար Ջառա Ամատունին: «ԿԽՄԿ-ն փետրվարին տեսակցություն է ունեցել հայերի հետ, ովքեր պահվում են Ադրբեջանում: Ռուբեն Վարդանյանին տեսակցությունը եղել է իր հացադուլի ընթացքում: Տեսակցության շրջանակներում մեր պատվիրակի հետ եղել է բժիշկ: Անազատության մեջ գտնվող հացադուլ հայտարարած անձանց ԿԽՄԿ-ն հնարավորություն ունի տեսակցելու բժշկի հետ, իսկ բժիշկը եւս պատվիրակ է եւ չի հանդիսանում տվյալ երկրի անձնակազմ: Բժիշկը հնարավորություն է ունեցել ապահովելու անձի չեզոք զննումը»,- ասել է նա:

ՍԱՐՍԱՓԵԼԻ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

ՌՈՒԲԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ԳԼԽԻՆ ԵՐԿԱԹ ԵՆ ԱՄՐԱՑՐԵԼ, ՍԵՂՄԵԼ

2020 թ. Արցախի Հանրապետության դեմ Ադրբեջանի սանձազերծած պատերազմից հետո Բաքվի եւ ադրբեջանական այլ քաղաքների բանտերում պահվում են ՀՀ քաղաքացի եւ ազգությամբ հայ բազմաթիվ ռազմագերիներ: Գերիների՝ Բաքվի կողմից հաստատված պաշտոնական թիվը 23 է, սակայն իրավապաշտպաններն ունեն փաստական աղացույցներ առնվազն 80 անձանց գերեվարման մասին: Այս մասին հայտարարություն է տարածել ԱԼԳ քաղաքացիական հասարակության ֆորումի Հայաստանի ազգային պլատֆորմը:

Հայտարարության մեջ ասվում է. «Բաքվի բռնապետությունը 44-օրյա պատերազմի ընթացքում եւ դրանից հետո մարդու հիմնարար իրավունքները ոտնահարող բազմաթիվ գործողություններ է կատարել. Արցախի խաղաղ բնակչության 9-ամսյա շրջափակման, ցեղասպանական գործողությունների՝ էթնիկ զտման եւ տեղահանության՝ միջազգայնորեն ընդունված հանցագործություններին ավելացել է բռնազավթված Արցախի Հանրապետության ռազմաքաղաքական ղեկավարների՝ Բաքվում ընթացող ապօրինի, արդարադատության ծաղր-դատավարությունը: Գերիները Բաքվում ենթարկվում են կտտանքների եւ հոգեբանական խոշտանգումների, իսկ միջազգայնորեն ճանաչված բարերար Ռուբեն Վարդանյանի դատը վերածվել է ստալինյան հաշվեհարդարի:

Դեռեւս դատավարությունից առաջ՝ ընտանիքի հետ ունեցած հեռախոսազրույցի ընթացքում, Ռուբեն Վարդանյանը ներկայացրել է իր նկատմամբ իրականացվող իրավական եւ դատավարական անօրինությունները: Այս օրերին մարդու իրավունքների ամենակոպիտ խախտումներով Բաքվում ընթացող դատավարական կեղծիքը զուրկ է արդարադատության տարրերից. ցուցադրաբար արհամարհվում են արդար դատաքննության հիմնարար սկզբունքները, առկա են բիրտ ուժի կիրառման, մարդու նվաստացման եւ լլկման երեւույթներ:

Ռուբեն Վարդանյանը եւ բոլոր մյուս բոլոր պատանդներն ու գերիները շինծու դատավարություններով դաժանաբար խոշտանգվում են՝ ադրբեջանական իշխանության վրեժխնդրության, քաղաքական խնդիրներ լուծելու եւ հայ ժողովրդի արժանապատվության հաշվին ինքնահաստատվելու, հայ ժողովրդի ազգային գիտակցությունը նսեմացնելու նպատակով:

Ի նշան անօրեն դատավարության դեմ բողոքի՝ Ռուբեն Վարդանյանը փետրվարի 20-ին հացադուլ է հայտարարել: Փետրվարի 26-ին՝ հերթական դատական նիստի ժամանակ, նրա ինքնազգացողությունը վատացել է, նիստն ընդհատվել է: «Հայրս ենթարկվել է խոշտանգումների»,-իր տեսաուղերձում հայտնում է Ռուբեն Վարդանյանի որդին՝ Դավիթ Վարդանյանը, եւ կոչ է անում պայքարել Բաքվում ապօրինի պահվող հայերի ցուցադրական դատավարությունների դեմ:

Սարսափելի մանրամասներ են ի հայտ եկել այն մասին, որ Ռուբեն Վարդանյանի գլխին երկաթ են ամրացրել, սեղմել, լլկել: Բժիշկները հայտարարում են, որ ստեղծված իրավիճակն ուղիղ սպառնալիք է Ռուբեն Վարդանյանի կյանքին: Առաջնորդվելով բժշկական էթիկայի սկզբունքներով եւ ՄԱԿ-ի «Խոշտանգումների եւ այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի եւ պատժի դեմ» կոնվենցիայով՝ նրանք անհապաղ միջամտություն են պահանջում միջազգային հումանիտար եւ բժշկական կազմակերպությունների կողմից:

Ադրբեջանի իշխանությունների կողմից շարունակվող հանցագործությունները բացահայտորեն խախտում են միջազգային իրավունքի, մասնավորապես՝ «Գերիների հետ վարվելակերպի մասին» Ժնեւյան երրորդ համաձայնագրի, մարդու իրավունքների վերաբերյալ դաշնագրերի ու համաձայնագրերի նորմերը եւ խարխլում են տարածաշրջանային կայունությանն ուղղված ջանքերը: Ուստի մենք՝ ԱԼԳ ՔՀՖ ՀԱՊ անդամ կազմակերպություններս, դատապարտում ենք Բաքվի կազմակերպած շինծու դատավարությունները, կոչ ենք անում ՀՀ կառավարությանը, ՀՀ Ազգային ժողովին, ՀՀ-ում գործող բոլոր դեսպանատներին, Սփյուռքահայ բոլոր կազմակերպություններին, ինչպես նաեւ միջազգային հանրությանը, մասնավորապես՝ ԱԼԳ ՔՀՖ-ին, ԱԼԳ ՔՀՖ Ադրբեջանի ազգային պլատֆորմին, ՄԱԿ- ի Անվտանգության խորհրդի անդամներին, ԵԱՀԿ-ին, Եվրոպական Միությանը, Եվրոպայի խորհրդին, Մեծ Յոթնյակի անդամ բոլոր երկրների ղեկավարներին՝ անհապաղ քայլեր ձեռնարկել Բաքվի բռնատիրական ռեժիմի հակաօրինական քաղաքականությունը դատապարտելու ուղղությամբ եւ պահանջել Ռուբեն Վարդանյանի եւ մյուս հայ գերիների իրավունքների պաշտպանությունը, նրանց նկատմամբ անմարդկային վերաբերմունքի դադարեցումը եւ ազատ արձակումը, դիմում ենք աշխարհի քաղաքացիական հասարակության կազմակերպություններին, մասնավորապես՝ Կարմիր խաչի միջազգային կոմիտեին եւ միջազգային իրավապաշտպան կազմակերպություններին բարձրաձայնել այս ճչացող հանցագործությունների մասին, համատեղ ջանքերով աջակցել Ռուբեն Վարդանյանի եւ մյուս հայ գերիների իրավունքների վերականգնմանը եւ նրանց շուտափույթ ազատ արձակմանը:

Մենք դիմում ենք միջազգային մարդասեր, բարերար եւ հասարակական գործիչ Ռուբեն Վարդանյանի ընտանիքին եւ փաստաբաններին՝ խնդրելով նրան հասցնել հացադուլը դադարեցնելու մեր հորդորը: Բաքվի բանտից մեզ հասցեագրած իր իսկ մարդասիրական խոսքով՝ «ամուր մնալու, դիմանալու եւ ճշմարտության հաղթանակին հավատալու» համար հարկավոր է լինել առողջ եւ շարունակել դիմակայել»:

Հայաստանի ազգային պլատֆորմ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ՈՒՍՈՒՑԻՉՆ ՈՒ ԱՇԱԿԵՐՏԻ ՀԱՅՐԸ ԾԵԾԵԼ ԵՆ ԻՐԱՐ

Օրեր առաջ արտակարգ դեպք է տեղի ունեցել Արմավիրի մարզում: ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Վաղարշապատի բաժնում օպերատիվ տեղեկություններ են ստացվել, որ Էջմիածին քաղաքի Մեսրոպ Մաշտոցի անվան թիվ 1 դպրոցի դիմացի հատվածում մոտ 10 անձ վիճաբանում եւ փոխադարձ հարվածներ են հասցնում միմյանց:

Պարզվել է, որ Էջմիածին քաղաքի Մեսրոպ Մաշտոցի անվան թիվ 1 դպրոցի ֆիզիկական պատրաստության ուսուցիչ, Արմավիրի մարզի բնակիչ 41-ամյա Արտաշես Չ.-ն փետրվարի 26-ին ֆիզիկական պատրաստության դասաժամին հարվածել է 6-րդ դասարանի աշակերտ, Արմավիրի մարզի բնակիչ 11-ամյա Ա. Ա.-ին: Նշված հարցի շուրջ պարզաբանումներ կատարելու նպատակով դպրոց է եկել երեխայի հայրը՝ Արմավիրի մարզի բնակիչ 36-ամյա Ռաֆայել Ա.-ն՝ իր եղբոր ընկերների հետ միասին, ապա դպրոցի վարչական շենքում հանդիպել Արտաշես Չ.-ին, հարվածել վերջինիս, որից հետո ուսուցիչը դպրոց է կանչել եղբորը՝ Արմավիրի մարզի բնակիչ 33-ամյա Արամ Չ.-ին եւ վերջիններիս միջեւ ծագած վիճաբանությունը շարունակվել է դպրոցի դիմացի հատվածում՝ Բաղրամյան փողոցում:

Նույն օրը դեպքի վայրից ձերբակալվել եւ ոստիկանության Վաղարշապատի բաժին են տեղափոխվել Արմավիրի մարզի բնակիչներ 36-ամյա Ռաֆայել Ա.-ն, 36-ամյա Տիգրան Ս.-ն, 33-ամյա Արամ Չ.-ն, 34-ամյա Կարեն Ա.-նեւ 36-ամյա Վահե Գ.-ն: Դեպքի փաստով ոստիկանության Վաղարշապատի բաժնում փաստաթղթեր են ձեւակերպվել, որոնք ձերբակալվածների հետ ներկայացվել են Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի Արմավիրի մարզային քննչական վարչության Վաղարշապատի քննչական բաժին:

9 ԵՐԿՐՊԱԳՈՒՆԵՐԸ ՁԵՐԲԱԿԱԼՎԵԼ ԵՆ

Երեկ ֆուտբոլային 9 երկրպագուներ ձերբակալվել են 72 ժամով:

Այս մասին «Ժողովուրդ» օրաթերթին տեղեկացրել են ՀՀ քննչական կոմիտեից: Նախաձեռնվել է քրեական վարույթ խուլիգանության հոդվածի հատկանիշներով: Ավելի վաղ «Ժողովուրդ» օրաթերթը հայտնել էր, որ ՖԱՖ-ի անդամները՝ ՀՖՖ-ի երկրպագուները, Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահ Արմեն Մելիքբեկյանի հրաժարականի պահանջով արդեն երկրորդ օրն է՝ խափանում են ակումբային հանդիպումները:

Երկրպագուները վառում են գունավոր ճայթուկներ՝ վանկարկելով՝ «Հեռացի՛ր», նկատի ունենալով ՀՖՖ նախագահ Արմեն Մելիքբեկյանին:

ԴԱՏԱՐԱՆ ՇՏԱՊՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԵՆ ԿԱՆՉԵԼ

Երեկ Երեւան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանում Նիկոլ Փաշինյանի ավտոշարասյան կողմից վրաերթի ենթարկված եւ մահացած հղի Սոնա Մնացականյանի գործով հերթական նիստն էր: ArmLur.am-ի հետ զրույցում փաստաբան Ռաֆֆի Ասլանյանը հայտնեց, որ դատարանում ստամկանի ինֆարկտ ստացավ Սոնա Մնացականյանի հորեղբայրը:

«Հայրն էլ մի քանի օր առաջ էր սրտամկանի ինֆարկտ ստացել ու այսօր դատարան չի եկել, անկողնային պառկած է: Ըստ տուժող կողմի՝ մեղադրյալի պաշտպանները, իմ գնահատականով, արդեն որերորդ նիստն է՝ շարունակում են սաբոտաժի ենթարկել դատական գործընթացը: Անցյալ նոյեմբերին մի ամբողջ դատական նիստի կրկնակի հարցաքննել էին փորձագետին՝նույն 2-3 հարցը (տարբեր ձեւակերպումներով) մի քանի ժամ շարունակ տալով: Այսօր էլի նույն բանն է: Համոզվում եմ, որ սա հատուկ մտածված տակտիկա է, որի նպատակը դատական գործընթացն այնքան ձգելն է, որ հանցագործության վաղեմության ժամկետն անցնի: Եվ սա, վստահ եմ, հատուկ խրախուսվում է «վերեւներից», հակառակ դեպքում՝ դատավորն այս ձեռքառնոցիին վաղուց վերջ դրած կլիներ», - ArmLur.am-ին ասել է Ասլանյանը:

Հիշեցնենք, որ 2023 թվականի ապրիլի 26-ին՝ ժամը 18:05-ի սահմաններում, Պարոնյան-Լեո փողոցների խաչմերուկում Հայաստանի Հանրապետության ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության ուղեկցող սպայական վաշտի հրամանատարն իր կողմից վարած «Տոյոտա Պրադո» մակնիշի ավտոմեքենայով վրաերթի է ենթարկել Արարատի մարզի 28-ամյա բնակչուհուն, որի հետեւանքով ստացած մարմնական վնասվածքներով վերջինս տեղափոխվել է «Նաիրի» բժշկական կենտրոն, որտեղ, գիտակցության չգալով, մահացել է: Նշված ավտոշարասյունն ուղեկցելիս է եղել վարչապետ Նիկոլ Փաշինյանին, իսկ մահացած կինը հղի է եղել:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

● *Ըստ ոստիկանության տվյալների՝փետրվարի 28-ից մարտի 3-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 277 դեպք, որից 12-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՔԱՎՈՐ ՄԱՐԶՊԵՏԸ ՉԻ ՀԻՇՈՒՄ ՆԱԽԿԻՆՈՒՄ ԱՍԱԾԸ

Բագրատաշենի ենթաշրջանի այգեգործները հայտնում են, որ Լոռու մարզում գործող հանքարդյունաբերական ձեռնարկությունների պոչամբարներից աղտոտված ջուրը, սովորաբար, Դեբեդ գետ բաց են թողնում գիշերները, որպեսզի մոխրագույն գետը այգեգործների աչքին չզարնի: Դեբեդի հովտի շատ այգիներ գետի աղտոտված ջրով ոռոգվելուց հետո չորացել են: Նոյեմբերյան համայնքի Պտղավան գյուղի բնակիչ Ռաֆիկ Օհանյանն ասում է, որ այգիները Դեբեդի ջրով ոռոգելուց հետո ոռոգվող ծառի մեջ հայտնվում եմ Մենդելեեւի պարբերական աղյուսակի բոլոր քիմիական տարրերը: 2024թ. ապրիլին Լոռու մարզի Թեղուտ գյուղում կայացել են Թեղուտի հանքի արդյունահանման թույլտվության ժամկետը 13 տարով երկարաձգելու, հանքավայրի ընդլայնման նախագծի վերաբերյալ հանրային լսումներ: Ըստ այդ նախագծի՝ նախատեսվում է Թեղուտի հանքավայրից տարեկան արդյունահանել 7 միլիոն տոննա հանքաքար: Լոռու մարզում գործող մետաղական հանքերը եւ հանքաքարը վերամշակող ընկերությունները շուրջ 20 տարի սպառնալիք են Տավուշի մարզի Նոյեմբերյան խոշոր համայնքի՝ Դեբեդի հովտի պտղատու այգիների համար: 2023 թվականին Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին տեղեկատվական հարցում ենք ուղարկել՝նրանից հարցնելով, թե Լոռու մարզի հանքարդյունաբերական ձեռնարկությունները ե՞րբ են գումար փոխանցելու Նոյեմբերյան համայնքի այն բնակավայրերին, որոնք տուժում են ծանր մետաղներով հագեցած Դեբեդի ջրով իրենց այգիները ոռոգելուց: Մարզպետը հայտնել էր, որ դա նախատեսված է 2024 թվականին: Սակայն 2024-ին Նոյեմբերյան համայնքին գումարներ չփոխանցվեցին: Օրերս տեղեկատվական հետեւյալ հարցումն ենք ուղարկել մարզպետ Ղալումյանին. «Նախկինում Դուք հայտնել եք, որ Լոռու մարզում գործող հանքարդյունաբերական ձեռնարկությունների վնասակար ազդեցության ենթարկվող համայնքների ցանկի մեջ ընդգրկված է Նոյեմբերյան համայնքը (2024 թվականի համար): Սակայն 2024 թվականին Նոյեմբերյան համայնքին բնությանը պատճառված վնասների համար գումարներ չեն փոխանցվել: 2025 թվականին այդ նպատակով Նոյեմբերյան համայնքին որքա՞ն գումար է տրվելու, այդ գումարը ե՞րբ, ի՞նչ մեխանիզմով է տրվելու»:

Մարզպետարանից պատասխանել են. «Լոռու մարզի հանքարդյունաբերության ձեռնարկության վնասակար ազդեցության նպատակով 2025 թ. Նոյեմբերյան համայնքին տրվող գումարի չափի եւ տրման մեխանիզմի վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն ստանալու համար առաջարկում ենք դիմել Նոյեմբերյանի համայնքապետարան»: Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանը չի հիշում, թե այդ խնդրի վերաբերյալ ինքը նախկինում ինչ է ասել: Նոյեմբերյանի համայնքապետարան դիմելով՝ տեղեկացանք, որ համայնքապետարանը զբաղվում է այդ հարցով:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԶԵԼԵՆՍԿԻ-ԹՐԱՄՓ

ՊՈՒՏԻՆԸ «ՆԿԱՏԻ Է ԱՌԵԼ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾԸ»

ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը տեղյակ է այն մասին, թե ինչ է տեղի ունեցել փետրվարի 28-ին Սպիտակ տան Օվալաձեւ աշխատասենյակում ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի, փոխնախագահ Ջեյ Դի Վենսի եւ Ուկրաինայի նախագահ Վոլոդիմիր Զելենսկիի հանդիպման ժամանակ: Այս մասին հայտնել է Կրեմլի խոսնակ Դմիտրի Պեսկովը: «Այո, իհարկե, նախագահը ծանոթ է տեղի ունեցածի էությանը, մանավանդ, որ դա հասանելի էր ողջ համաշխարհային հանրությանը՝ իր նրբերանգներով, ուստի, իհարկե, նախագահը գիտի բոլոր նրբերանգները»,- մեջբերում է նրա խոսքերն «Ինտերֆաքս»-ը:

Պուտինի արձագանքի մասին հարցին Պեսկովը պատասխանել է, որ ՌԴ նախագահը «նկատի է առել տեղի ունեցածը»:

Ըստ Պեսկովի՝ այդ վիճաբանությունը ցույց է տալիս, որ ռուս-ուկրաինական հակամարտության կարգավորմանը հասնել դժվար կլինի:

«Այն, ինչ տեղի ունեցավ ուրբաթ օրը Սպիտակ տանը, անշուշտ, ցույց տվեց, թե որքան դժվար կլինի հասնել Ուկրաինայի շուրջ հարցի կարգավորման: Կիեւի վարչակարգը եւ Զելենսկին խաղաղություն չեն ուզում, նրանք պատերազմի շարունակություն են ուզում», - ասել է Կրեմլի ներկայացուցիչը: «Սա, կարելի է ասել, բավականին աննախադեպ իրադարձություն է: Եվ իհարկե, Զելենսկին շատ հարցերում ցույց տվեց, հավանաբար, դիվանագիտական հմտությունների լիակատար բացակայություն», - հավելել է Կրեմլի ներկայացուցիչը: Պեսկովը նաեւ նշել է, որ հավաքական Արեւմուտքը սկսել է «կորցնել իր հավաքականությունը», սկսվել է մասնատման գործընթաց:

«Այժմ անհրաժեշտ կլինի ցանկացած կառուցողական աջակցություն այս գործընթացին, ցանկացած կառուցողական նախաձեռնություն: Ակնհայտ է, որ ինչ-որ մեկը պետք է մեծ ջանքեր գործադրի Վաշինգտոնի հետ երկխոսության առումով, որպեսզի ինչ-որ կերպ չեզոքացնի այն տհաճ նստվածքը, որը, հավանաբար, մնացել է Սպիտակ տանը Զելենսկիի հետ շփվելուց հետո»,-հավելել է Պեսկովը:

Նա նշել է, որ Մոսկվան եւ Վաշինգտոնը շարունակում են բանակցությունները երկկողմ հարաբերությունների կարգավորման շուրջ, եւ դրա հետ մեկտեղ Ռուսաստանը շարունակում է ռազմական գործողություններն Ուկրաինայում, որպեսզի «հասնի բոլոր նպատակներին, որոնք դրված են եղել հենց սկզբից»:

Ըստ Պեսկովի՝ ուկրաինական կարգավորման հարթ խաղաղ ծրագիր դեռ օրակարգում չկա:

«Վերջնական խաղաղության պլանների ինչ-որ առաջին ուրվագծեր են հայտնվում: Թեեւ դեռ հնարավոր չէ ասել, որ օրակարգում կա որեւէ համակարգված ինստիտուցիոնալ խաղաղության ծրագիր»,-նշել է Կրեմլի ներկայացուցիչը: Նրա խոսքով՝ ուկրաինական կարգավորման հարցը վերջին տարիների միջազգային կենտրոնական խնդիրներից է: Ըստ նրա՝ ամերիկյան նոր վարչակազմը Ռուսաստանի հետ հարաբերությունները վերականգնելու եւ հակամարտությունն արագ լուծելու ուղղություն է սահմանել, սակայն դրան խոչընդոտում են ինչպես Կիեւը, այնպես էլ եվրոպական երկրները: Մոսկվան հանդես է գալիս հակամարտությունը քաղաքական եւ դիվանագիտական ճանապարհով լուծելու օգտին՝ պայմանով, որ հակամարտության բուն պատճառները վերացվեն: Միեւնույն ժամանակ Արեւմտյան Եվրոպայում անհրաժեշտ են համարում Ռուսաստանի Դաշնությանը «ռազմավարական պարտության» մատնելը՝ հնարավոր բանակցություններում Կիեւի առավելություններն ապահովելու եւ Ուկրաինայի պայմաններով կարգավորման հասնելու հարցում:

Ա. ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՏԱՁԳՎԵՑ ՀԱՋՈՐԴ ՇԱԲԱԹ

ԱԺ եվրոպական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողովը երեկ հրավիրած արտահերթ նիստում երկրորդ ընթերցմամբ քննարկել է «Եվրոպական միությանը Հայաստանի Հանրապետության անդամակցելու գործընթացի մեկնարկի մասին» օրենքի նախագիծը: Նախագիծը ներկայացրել է «Եվրաքվե» քաղաքացիական նախաձեռնությունը՝ սահմանված ժամկետում հավաքելով ԱԺ-ին օրենսդրական նախաձեռնություն ներկայացնելու համար անհրաժեշտ 60 հազար քաղաքացու ստորագրություն: Նախաձեռնող խմբի լիազոր ներկայացուցիչ Արտակ Զեյնալյանը հիշեցրել է, որ Սահմանադրությամբ նախատեսված իրավունքի իրացմամբ ձեւավորվել է նախաձեռնող խումբ, որը հանդես է եկել օրենքի նախագծի քաղաքացիական նախաձեռնությամբ: Նախաձեռնող խումբը մեկ ամսում հավաքել է անհրաժեշտ ստորագրությունները Հայաստանի 44 խոշորացված համայնքներից եւ Երեւանի վարչական շրջաններից: Ստորագրությունները ստուգվել են ԿԸՀ-ի կողմից. դրանք վավերական են եղել: Արտակ Զեյնալյանը տեղեկացրել է, որ օրինագծում բովանդակային փոփոխություններ չեն եղել:

ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ Պարույր Հովհաննիսյանը, ներկայացնելով Կառավարության դրական դիրքորոշումը, նշել է, որ գործադիրն ունի մի քանի առաջարկ՝ իրավական տեխնիկայի վերաբերյալ: Օրենքի նախագծի քվեարկությունը հետաձգվել է:

ԿՐԿԻՆ ԷՐԴՈՂԱՆԸ

Թուրքիայի իշխող «Արդարություն եւ զարգացում» կուսակցության փոխնախագահ Հուսեյն Յայմանը հայտարարել է, որ կուսակցությունը դիտարկում է նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանին 2027 թվականի նոյեմբերին կայանալիք նախագահական ընտրություններում կրկին առաջադրելու հեռանկարը: Այս մասին հայտնում է IHA գործակալությունը: «Այլ թեկնածուի կարիք չկա: Հաջորդ ընտրություններում մենք մեր նախագահին կրկին երկրի ղեկավար կդարձնենք»,-ասել է նա Անթալիայում ԱԶԿ անդամների հետ հանդիպմանը:

Նա նշել է, որ Էրդողանի թեկնածությունը կառաջադրի Ժողովրդական դաշինքը, որի կազմում են ԱԶԿ-ն եւ «Ազգայնական շարժում» կուսակցությունը:

Թուրքիայի սահմանադրության համաձայն՝ 2028 թվականին, երբ նախատեսվում են ընտրություններ, նա այլեւս չի կարողանա առաջադրվել նախագահի պաշտոնում, սակայն արտահերթ ընտրությունների դեպքում նա կունենա այդ իրավունքը: Ավելի վաղ ընդդիմությունը կոչ էր արել իշխանություններին որոշում կայացնել 2025 թվականին արտահերթ ընտրությունների վերաբերյալ: Մինչդեռ արտահերթ ընտրությունների մասին որոշումը կյանքի կոչելու համար անհրաժեշտ է խորհրդարանի համապատասխան սանկցիա: Պաշտոնապես ԱԶԿ-ն ու երկրի ղեկավարությունը ներկայումս հայտարարում են, որ արտահերթ ընտրությունների հարցը օրակարգում չկա:

● *Անցած 3 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 26 պատահար. 28 անձ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

4-ՐԴԸ՝ ԽՈՇՈՐ ՀԱՐԿԱՏՈՒՆԵՐԻ ՀԱՋԱՐՅԱԿՈՒՄ

«Բադալյան եղբայրներ» ընկերությունների խմբին պատկանող 4 ընկերություն ՀՀ 2024 թ.-ի 1000 խոշոր հարկատուների ցանկում են: Ընկերությունների վճարած հարկերի ծավալը կազմել է 26 մլրդ 17 մլն 541 հազար դրամ՝ ներառյալ հիմնադիրների կողմից վճարված հարկերը: Երկրի խոշորագույն «ՍոֆթԿոնստրակտ» ՏՏ ընկերությունը 2024 թ.-ին պետբյուջե է վճարել 18 մլրդ 627 մլն 274 հազար դրամ, այն հազարյակում զբաղեցնում է 12-րդ հորիզոնականը:

Ընկերությունների խմբին պատկանող «Ֆասթ բանկ» ՓԲԸ-ն պետբյուջե է վճարել 4 մլրդ 150 մլն 25 հազար դրամ, բանկը ՀՀ հազար խոշոր հարկ վճարողների ցանկում 74-րդն է: «Ֆասթ Մեդիա» ՍՊԸ-ն 534-րդն է, «Յուքրաֆթ» ՍՊԸ-ն՝ 784-րդը :Վճարված եկամտային հարկերի թոփ տասնյակում «Սոֆթ Կոնստրակտը» 3-րդ հորիզոնականում է: 2024 թ.-ի վերջին տվյալներով՝ հոլդինգի աշխատակիցների թիվը Հայաստանում 7179 է, երկրից դուրս՝ 1128 մշտական աշխատակից, եւս 1500-ը՝ գործարքային:

Գործելով տեղեկատվական տեխնոլոգիաների խաղային բիզնեսի, հեռուստատեսության, բանկային եւ վճարային համակարգերի, գյուղատնտեսության, հանրային սննդի եւ շինարարության ոլորտներում, ընկերությունների խումբը հավատարիմ է մնում իր արժեքներին՝ շարունակելով պահպանել առանցքային դերն աշխատաշուկայում:

1900 ԵՐԵԽԱ ՊԱՏՎԱՍՏՎԵԼ Է

Ջրծաղիկի դեմ պատվաստման գործընթացին ուղղված աշխատանքները շարունակվում են ըստ պլանավորածի. հանրապետության ամբողջ տարածքում արդեն պատվաստվել է 1900 երեխա: Այս մասին հայտնել է Հիվանդությունների վերահսկման եւ կանխարգելման ազգային կենտրոնի իմունականխարգելման եւ կառավարելի վարակիչ հիվանդությունների համաճարակաբանության վարչության պետ Սվետլանա Գրիգորյանը՝ նշելով, որ պատվաստանյութը բավականին սպասված էր հանրության կողմից. գործընթացը ընթանում է ըստ պլանավորածի եւ առանց որեւէ արտառոց դեպքերի:

Մասնագետի խոսքով՝ պատվաստումները մեկնարկել են 2025 թվականի հունվարի 31-ից: Պատվաստման ենթակա են 2023 թվականի նոյեմբերի 1-ից հետո ծնված ու 12 ամսականը լրացած երեխաները: Նախատեսվում է, որ 2027 թվականից այս երեխաները կստանան իրենց 2-րդ դեղաչափը: Երկու դեղաչափը բավարար է՝կյանքի ընթացքում ջրծաղիկ հիվանդությունից պաշտպանված լինելու համար: Գրիգորյանը նշել է, որ Հայաստանում 2025 թվականի հունվար ամսին գրանցվել է ջրծաղիկի 2363 դեպք, իսկ 2024 թվականի ընթացքում գրանցվել է 22 հազար 11 դեպք:

ՆԱԽԱՐԱՐՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է

ՏՆՏԵՍՎԱՐՈՂՆԵՐԻ ՀԱՐՑԸ ՉԻ ԼՈՒԾՎՈՒՄ

Հայուրավոր տնտեսվարողներ երեկ շարունակել են բողոքի ակցիան Կառավարության շենքի մոտ՝ պահանջելով օրենքի վերանայում, շրջանառության հարկի նվազեցում: Նրանք նշել են, որ հակառակ դեպքում բիզնեսներ կփակվեն, իրենք էլ գործազուրկների շարքերը կհամալրեն: Տնտեսվարողները մտադիր են ակցիան շարունակել նաեւ Ազգային ժողովի շենքի մոտ:

Հիշեցնենք, որ հունվարի 1-ից ուժի մեջ էին մտել հարկային օրենսգրքում փոփոխությունները: Ըստ այդմ, ձեռքբերման փաստաթղթեր չներկայացրած առեւտրականների համար կրկնապատկվում էր շրջանառության հարկը՝ 5-ից դառնալով 10 տոկոս, իսկ փաստաթղթեր ներկայացնողների համար հակառակը՝ 1,5 տոկոսից իջնում էր 1 տոկոսի: Բացի այդ, դրվում էր ապրանքը գույքագրելու պահանջ:

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը խորհրդարանում հայտարարել էր, որ վիճակագրական տվյալներ ունեն՝ շրջանառության հարկ վճարողների 60 տոկոսից ավելին միայն 10 միլիոնի շրջանառություն է ցույց տալիս, իսկ սա նշանակում է օրական միայն 27 հազար դրամի առեւտուր, ինչը իրատեսական չէ:

Փաշինյանի խոսքով՝ պատրաստ են գնալ բոլոր փաստաթուղթ չտվողների հետեւից: Փետրվարիի վերջին, սակայն, Կառավարությունը ժամանակավոր հետքայլ արեց շրջանառության հարկի բարձրացման հարցում: Փետրվարի 27-ին՝ Կառավարության նիստի ժամանակ, ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյանը հայտարարեց, որ այս տարվա առաջին կեսին 5 տոկոսից ավելի վճարվելիք հարկը կվերադարձնեն բիզնեսներին:

«Շրջանառության հարկ վճարողները կկարողանան ցածր հարկային բեռի միջավայրում իրացնել նախկինում առանց փաստաթղթերի ձեռք բերված ապրանքները, եւ շրջանառության հարկ վճարողները 25 թվականի հունվարի 1-ի դրությամբ առկա փաստաթղթերով հիմնավորված ապրանքային մնացորդի մասով հարկից լրացուցիչ նվազեցում կատարելու հնարավորություն կստանան», - հայտարարեց Հովհաննիսյանը: Մինդեռ ցուցարարները պնդում են, որ այս որոշումը խաբեություն է, բարեփոխում չէ, եւ օրենքի ամբողջական փոփոխություն են պահանջում:

Հիշեցնենք, որ տնտեսվարողները տարբեր հարթակներում իրենց դժգոհությունն են հայտնում իրենց խնդրի վերաբերյալ: Փետրվարի 13-ին՝ Կառավարության հերթական նիստի օրը, Աբովյան քաղաքի ձեռներեցներից մեկը Կառավարության շենքի մոտ էր բերել չվաճառված սեզոնային հագուստի մի մասը՝ ի նշան բողոքի: Ցանկանում էր Կառավարությանը նվիրել, քանի որ վաճառելն իր համար հարկային փոփոխություններից հետո այլեւս ձեռնտու չէ: Երեկ ՀՀ էկոնոմիկայի նախարար Գեւորգ Պապոյանը հանդիպել է տնտեսվարողների հետ եւ լսել նրանց պահանջը, որն է չեղարկել շրջանառության հարկի մասին նոր օրենքը: Նախարարն առաջարկել է բոլորին ներս մտնել եւ ներսում խոսել:

«Այդ թեստից արդեն 10 անգամ անցել ենք, բոլորին տեսել ենք, բոլորի հետ զրուցել ենք»,-նշել են ակցիայի մասնակիցները:

«Հիմա դուք գործարա՞ր եք, թե՞ ընդդիմադիր գործիչ. եկեք պայմանավորվենք՝ ընդդիմադիրները թող մնան այստեղ, ես հարգում եմ նրան, ով գործարար է, գնանք ներսում քննարկենք»,-ասել է նախարարը՝ նշելով. «Մեր երկրի ամենամեծ պրոբլեմը երբեմն որոշ խոշոր բիզնեսմենների մեջ է, որոնք հաճախ աշխատում են չփաստաթղթավորված ու իրենց հետեւից մյուսներին էլ տանում են չփաստաթղթավորման»:

Ն. ՊՈՂՈՍՅԱՆ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

IDBank. ԱՆԱԿՆԿԱԼՆԵՐ, ՅՈՒՐԱՀԱՏՈՒԿ ՄԹՆՈԼՈՐՏ ⇨

Փետրվարի 27-ին IDBank-ը կրկին հաճախորդների համար շնորհակալության օր էր կազմակերպել. բանկի «Կենտրոն» մասնաճյուղում սպասարկվողներին ընդունում էին անակնկալներով ու յուրահատուկ մթնոլորտով:

Առանց առիթի շնորհակալության այս օրերն IDBank-ն արդեն գեղեցիկ ավանդույթ է դարձրել. հաճախորդները մասնաճյուղում մասնակցում են փոքրիկ խաղարկությունների, շահում idcoin-ներ, ստանում անակնկալ նվերներ:

IDBank-ի Հաճախորդների փորձառության մենեջեր Սեդա Ավագյանի խոսքով՝ գաղտնիք չէ, որ բանկի առաքելության առանցքային կետը հաճախորդներին լավագույն սպասարկումն ապահովելն է. «Յուրաքանչյուր նոր գաղափար, նախաձեռնություն ու նորարարական մոտեցում իրականացվում է՝ հաշվի առնելով մեր հաճախորդների կարիքներն ու ցանկությունները: Մենք ամեն օր ենք շնորհակալ մեր հաճախորդներին, որ ընտրում են մեզ, բայց երբեմն նաեւ այսպիսի փոքրիկ միջոցառումներով ցանկանում ենք եւս մեկ անգամ մեր հոգատարությունն ու շնորհակալությունը ցույց տալ նրանց», - ասաց Սեդա Ավագյանը:

«Կենտրոն» մասնաճյուղի կառավարիչ Սիդա Շահնազարյանն էլ նշեց, որ թիմն ամենօրյա աշխատանքով, հաճախորդների հետադարձ կապը լսելով է փորձում լավագույն սպասարկումն ապահովել նրանց համար ու երբեմն անգամ գերազանցել սպասելիքները. «Մեր հավատարիմ հաճախորդները վստահում են մեզ, միշտ գտնում իրենց կարիքներին համապատասխան պրոդուկտներն ու սպասարկումը, մենք էլ մեր շնորհակալությունը հայտնում ենք ոչ միայն բարձրորակ սպասարկմամբ, այլ նաեւ նմանատիպ միջոցառումներով»:

Հերթական սպասարկման համար բանկ շտապող հաճախորդները անակնկալի էին գալիս՝տեսնելով խաղարկության հաջողակ անիվը, որը պտտելով շահում էին idcoin-ներ, քաղցր անակնկալներն ու սովորականից տարբերվող միջավայրը: Ստացված idcoin-երը հաջողակները կարող են օգտագործել ամենուր, ուր կա «Իդրամով» վճարում կատարելու հնարավորություն, այսինքն՝ ավելի քան 23,500 վաճառակետում: IDBank-ից խոստանում են՝ նմանատիպ անակնկալները հաճախորդների համար շարունակական են լինելու:

ԲԱՆԿԸ ՎԵՐԱՀՍԿՎՈՒՄ Է ՀՀ ԿԲ ԿՈՂՄԻՑ

ԵՂԱՆԱԿԸ՝ ԱՌԱՔԻԿԱՅՈՒՄ

Երեւան քաղաքում մարտի 4-ի գիշերը եւ առավոտյան սպասվում է ձյուն: Մարտի 4-ի ցերեկը, 5-8-ին սպասվում է առանց տեղումների եղանակ: Այս մասին հայտնում են Հայհիդրոմետից: Հանրապետության տարածքում մարտի 3-ի երեկոյան, 4-ցերեկն առանձին շրջաններում, 4-ի գիշերը շրջանների զգալի մասում սպասվում է ձյուն: Մարտի 5-8-ին սպասվում է առանց տեղումների եղանակ: Քամին հյուսիսարեւմտյան հատվածում 2-5մ/վ է: Մարտի 3-ի ցերեկն առանձին հատվածներում սպասվում է քամու ուժգնացում՝ 15-18մ/վ, մարտի 4-ին եւ 6-ին՝ 12-15մ/վ արագությամբ, լեռնային շրջաններում՝ բուք, ցածր հորիզոնական տեսանելիություն: Օդի ջերմաստիճանը 3-8-ին եւ գիշերը, եւ ցերեկն աստիճանաբար կբարձրանա 10-13 աստիճանով:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

«ՕՍԿԱՐ»-Ի ՀԱՂԹՈՂՆԵՐԸ

ՀԱՅԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ «ԱՆՈՐԱ»-Ն՝ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՖԻԼՄ

Լոս Անջելեսի Dolby թատրոնում անցկացվել է Ամերիկյան կինոակադեմիայի «Օսկար» մրցանակաբաշխության 97-րդ արարողությունը, որի ընթացքում մրցանակներ են շնորհվել 2024 թվականին լույս տեսած ֆիլմերին:

Ինչպես հայտնի է, «Անորա»-ում դերակատարում ունեին նաեւ հայ արտիստներ՝ Վաչէ Թովմասյանը եւ Կարեն Կարագուլյանը, իսկ ֆիլմը, որը նոմինացված էր 6 անվանակարգերում, դարձել է այս տարվա մրցանակաբաշխության գլխավոր հաղթողը՝ ստանալով 5 մրցանակ, այդ թվում՝ «լավագույն ֆիլմ», «լավագույն դերասանուհի», «լավագույն ռեժիսոր», «լավագույն օրիգինալ սցենար» եւ «լավագույն մոնտաժ»:

Եվ այսպես, «լավագույն ֆիլմ» անվանակարգում «Անորա»-ի հետ առաջադրվել էին Բրեյդի Քորբեթի «Բրուտալիստը», Ջեյմս Մենգոլդի «Բոլորին անհայտը», Էդվարդ Բերգերի «Կոնկլավ»-ը: «Լավագույն ֆիլմ»-ի տիտղոսին էին հավակնում նաեւ «Սուբստանցիա», «Էմիլիա Պերես», «Դյունա. մաս 2», «Ես դեռ այստեղ եմ», «Նիկելե տղաները», «Չարը» ֆիլմերը:

Լավագույն դերասան է ճանաչվել Էդրիեն Բրոուդին «Բրուտալիստը» ֆիլմում մարմնավորած կերպարի համար: Այս անվանակարգում առաջադրված էին նաեւ Թիմոթի Շալամեն «Բոլորին անհայտը» ֆիլմում հայտնի ռոք երաժիշտ Բոբ Դիլանին մարմնավորելու համար, Ռեյֆ Ֆեյնսը «Կոնկլավ» ֆիլմում գլխավոր դերակատարման համար, Սեբաստիան Ստենը «Աշակերտը» ֆիլմում Դոնալդ Թրամփին մարմնավորելու համար եւ Կալման Դոմինգոն «Սինգ-սինգ» ֆիլմում գլխավոր դերի համար:

«Լավագույն դերասանուհի» անվանակարգում հաղթող է ճանաչվել Մեյքի Մեդիսոնը («Անորա»): Տվյալ անվանակարգում առաջադրված էին նաեւ Դեմի Մուրը («Սուբստանցիա»), Սինտիա Էրիվոն («Չարը»), Կառլա Սոֆիա Գասկոնը («Էմիլիա Պերես»), Ֆեռնանդա Տոռեսը («Ես դեռ այստեղ եմ»):

Լավագույն ռեժիսոր է ճանաչվել Շոն Բեյքերն իր «Անորա» ֆիլմի համար: Այս անվանակարգում առաջադրված էին նաեւ Բրեյդի Քորբեթը «Բրուտալիստը», Կորալի Ֆարժան «Սուբստանցիա», Ջեյմս Մենգոլդը «Բոլորին անհայտը», Ժակ Օդիարը «Էմիլիա Պերես» ֆիլմերի համար:

Լավագույն երկրորդ պլանի դերասան է ճանաչվել Քիրան Քալկինը («Իրական ցավ»), իսկ լավագույն երկրորդ պլանի դերասանուհի՝Զոյի Սալդանան («Էմիլիա Պերես»):

«Լավագույն օրիգինալ սցենար» անվանակարգում եւս հաղթող է ճանաչվել «Անորա»-ն, որն այս մրցանակի համար պայքարում էր «Բրուտալիստը», «Իրական ցավ», «Սեպտեմբերի 5», «Սուբստանցիա» ֆիլմերի հետ:

«Լավագույն ադապտացված սցենար» անվանակարգում հաղթող է ճանաչվել «Կոնկլավ»-ը: Այս մրցանակին էին հավակնում նաեւ «Բոլորին անհայտը», «Էմիլիա Պերես», «Նիկելե տղաները», «Սինգ-սինգ» ֆիլմերը:

«Լավագույն օտարալեզու ֆիլմ» մրցանակը շնորհվել է «Ես դեռ այստեղ եմ» (Բրազիլիա) ֆիլմին: Այս անվանակարգում առաջադրված էին «Ասեղով աղջիկը» (Դանիա), «Էմիլիա Պերես» (Ֆրանսիա), «Սուրբ թզի սերմը» (Գերմանիա) ֆիլմերը եւ «Հոսք» անիմացիոն ֆիլմը (Լատվիա):

«Լավագույն անիմացիոն ֆիլմ» մրցանակը շնորհվել է «Հոսք»-ին: Այս անվանակարգում առաջադրված էին նաեւ «Գլուխկոտրուկ 2», «Խխունջի հուշերը», «Ուոլես եւ Գրոմիթ. ամենավայրի վրեժը», «Վայրի Ռոբոտ» անիմացիոն ֆիլմերը:

«Լավագույն սաունդթրեք» անվանակարգում մրցանակը շնորհվել է «Բրուտալիստ»-ին: Այս մրցանակին էին հավակնում նաեւ «Կոնկլավ», «Էմիլիա Պերես», «Չարը» ֆիլմերը եւ «Վայրի ռոբոտ» անիմացիոն ֆիլմը:

Ա. ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ՄԱՐԶԱԿԱՆ

ՄԱՍԿԵՐԱՆՈՆ ՄԵԿՆԱԲԱՆԵԼ Է

«Ինտեր Մայամի»-ի գլխավոր մարզիչ Խավիեր Մասկերանոն մեկնաբանել է հարձակվող Լիոնել Մեսսիի՝ «Հյուսթոն Դինամոյի» հետ MLS-ի արտագնա հանդիպման հայտացուցակում չընդգրկվելը: Այս խաղում հյուրերը հաղթել են 4:1 հաշվով: «Ինչ վերաբերում է Լեոյին, իհարկե, մենք խոսել ենք այդ մասին, եւ ես միշտ նույնն եմ կրկնում. չկա մեկը, ես չգիտեմ մեկ խաղացողի աշխարհում, ով հասկանա նրա մարմինը, ինչպես Լեոն: Վեց օրվա ընթացքում երեք հանդիպումից հետո մենք մտածեցինք, որ լավագույնը կլինի նրան մի փոքր հանգստանալու հնարավորություն տալ, հատկապես ճանապարհորդության ժամանակ, որը տեւում է 2,5-ից 3 ժամ»,- Մասկերանոյի խոսքերն է մեջբերում ESPN-ը: Մեսսին «Ինտեր Մայամիին» է միացել 2023 թվականի ամռանը: Ֆուտբոլիստի գործող աշխատանքային պայմանագիրն ակումբի հետ նախատեսված է մինչեւ 2025 թվականի ավարտը: Transfermarkt պորտալում ներկայացված տեղեկատվության համաձայն՝ ֆուտբոլիստի շուկայական արժեքը կազմում է 20 մլն եվրո:

ՊԱՏՐԱՍՏ Է ԶԻՋՈՒՄՆԵՐԻ

«Սանթոսի» բրազիլացի հարձակվող Նեյմարը պատրաստ է զիջումների գնալ «Բարսելոնա» վերադառնալու համար: Այս մասին հայտնում է COPE-ը: Աղբյուրի տեղեկություններով՝ բրազիլացին կհամաձայնի ցածր աշխատավարձին՝ «Բլաուգրանային» միանալու համար: Նշվում է, որ ֆուտբոլիստի այս որոշումը զգալիորեն կմեծացնի տրանսֆերի հավանականությունը՝ հաշվի առնելով «կապտանռնագույնների» ֆինանսական սահմանափակումները: Նեյմարը «Բարսելոնայում» հանդես է եկել 2013-ից 2017 թվականներին: Այս ընթացքում նա բոլոր մրցաշարերում մասնակցել է 186 հանդիպման, որոնցում դարձել է 105 գոլի եւ 76 գոլային փոխանցման հեղինակ: Transfermarkt ինտերնետային պորտալում տրամադրված տեղեկատվության համաձայն՝ ֆուտբոլիստի շուկայական արժեքը կազմում է 15 միլիոն եվրո:

ՀՐԱԺԱՐԱԿԱՆ ՉԻ ՏԱ

«Միլանի» գլխավոր մարզիչ Սերժիու Կոնսեյսաոն մեկնաբանել է Ա Սերիայի 27-րդ տուրի խաղում «Լացիոյից» կրած պարտությունը (1:2). «Առաջին անգամ էի մարզվում նման մթնոլորտում: Պատահում է, որ քո թիմը չի կարողանում տիրել գնդակին կամ ճշգրիտ փոխանցում կատարել: Գործերն այնպես չեն դասավորվում: Բայց նույնիսկ այս իրավիճակում թիմը բնավորություն ցույց տվեց: Մենք ոչ-ոքի խաղացինք տասը հոգով եւ կարողացանք նույնիսկ հաղթանակ կորզել: Հետո այդ 11-մետրանոցը: Հիմա այս իրավիճակից միակ ելքը մեր պաշտպանած գույների համար աշխատելն ու պայքարելն է: Եթե դա օգնի, ես պատրաստ եմ ավելի շատ աշխատել: Դրա համար ես չեմ պատրաստվում հրաժարական տալ: Ավելին՝ ես ունեմ ֆուտբոլիստների լիակատար աջակցությունը»,- մարզչի խոսքը մեջբերում է La Gazzetta dello Sport-ը:

ԼՈՒՐԵՐ

ՄԵԾ ՊԱՀՔԸ ՍԿՍՎԵԼ Է

Պահեցողությունը առիթ ու հնարավորություն է առավել զորացնելու մեր հոգիները, ամրապնդելու մեր կամքը, աննկուն մնալու հավատով ու ոգով եւ ապրելու Աստծո պատվիրաններով: Այս մասին նշել է Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսը՝Մեծ պահքի մեկնարկի առիթով իր ուղերձում:

«Մուտք ենք գործում Մեծ Պահքի շրջան, որը աղոթքի, ինքնաքննության, զղջումի ու ապաշխարության ճանապարհով առաջնորդելու է մեզ դեպի մարդեղացյալ մեր Տեր Հիսուս Քրիստոսի հրաշափառ Հարության խնդություն:Պահեցողությունը առիթ ու հնարավորություն է առավել զորացնելու մեր հոգիները, ամրապնդելու մեր կամքը, սրբվելու մեղքից, մերժելու արատավոր ընթացքները, աննկուն մնալու հավատով ու ոգով եւ ապրելու Աստծո պատվիրաններով: Պահքի աղոթական պտուղը մաքրությունն է սրտի, որը ձգտում է կատարելության՝ ըստ տերունական կոչի. «Կատարյալ եղեք դուք, ինչպես որ ձեր երկնավոր Հայրն է կատարյալ» (Մատթ. 5.48): Այսպես կարող պիտի լինենք, ունկնդիր Մեծ Պահքի խորհրդին եւ Պահոց կիրակիների պատգամներին, հաստատելու մեր կյանքը աստվածապատվեր սիրո, արդարության ու բարության շավիղներում: Յուրաքանչյուր հավատացյալի աստվածահաճո կենցաղավարությամբ է նաեւ, որ հավելվում է մեր ժողովրդի ներուժը՝ Տիրոջն ապավինած դիմագրավելու առկա մարտահրավերները եւ դառնալու զորեղ ազգ ու պետություն: Հայցենք, որ Փրկչի Սուրբ Հարության կենարար շնորհներով վերափոխվենք եւ շեն ու պայծառ դարձնենք ազգային մեր կյանքը: Թող Աստծո ամենախնամ Սուրբ Աջի ներքո խաղաղ ու անվտանգ լինի մեր հայրենիքը, եւ բարօր ու ապահով՝ համայն մեր ժողովուրդը ի հայրենիս եւ ի սփյուռս, այսօր եւ միշտ. ամեն»,- ասված է վեհափառի ուղերձում:

Հայ Առաքելական եկեղեցու տոնացույցով 2025 թվականի մարտի 3-ին մեկնարկում է 48-օրյա Մեծ Պահքը: Սուրբ Հարության (Զատիկ) տոնը ապրիլի 20-ին է:

ԹԱՏՐՈՆԻ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԸ

Երեւանի քաղաքապետ Տիգրան Ավինյանի՝փետրվարի 24-ի որոշմամբ Արտաշես Մխիթարյանը 2025 թվականի փետրվարի 28-ից ազատվել է «Երեւանի Հրաչյա Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոն» համայնքային ոչ առեւտրային կազմակերպության տնօրենի պաշտոնից: Աշխատանքային վերջին օր համարվել է 2025 թվականի փետրվարի 27-ը: Տիգրան Ավինյանի մեկ այլ որոշմամբ այդ պաշտոնին նշանակվել է Գրիգոր Սուրենի Խաչատրյանը: Նա այդ պաշտոնին նշանակվել է՝ մինչեւ տնօրենի թափուր պաշտոնը մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի կողմից զբաղեցնելը:

● *Կ. Ստանիսլավսկու անվան ռուսական դրամատիկական թատրոնում մարտի 5-ին տեղի կունենա «Յանկապատ» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝3000-8000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ի՞նչ փաստաթղթեր են անհրաժեշտ ՀՀ-ում օտարերկրյա քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց, օտարերկրյա պետությունում մշտապես բնակվող ՀՀ քաղաքացիների միմյանց եւ ՀՀ քաղաքացիների հետ ամուսնության գրանցման համար, ի՞նչ ժամկետներ են գործում եւ ո՞րն է արդյոք ժամկետների կրճատման դեպքում վճարվելիք գումարի չափը:

Լիլիթ Հունանյան (43 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հայտնում ենք, որ օտարերկրյա քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց, օտարերկրյա պետությունում մշտապես բնակվող ՀՀ քաղաքացիների միմյանց եւ ՀՀ քաղաքացիների հետ ՀՀ-ում ամուսնություն գրանցելիս անհրաժեշտ է ներկայացնել անձնագիրը եւ տվյալ պետության իրավասու մարմինների կամ դեսպանության /հյուպատոսության/ կողմից տրված ընտանեկան կարգավիճակը հաստատող փաստաթուղթ /տեղեկանք, թույլտվություն, հայտարարություն եւ այլն/՝ վավերացված ՀՀ արտաքին գործերի նախարարության դիվանագիտական կամ հյուպատոսական մարմիններում, եթե այլ բան նախատեսված չէ ՀՀ միջազգային պայմանագրերով: Օտարերկրյա պետության իրավասու մարմինների կողմից տրված փաստաթուղթը /փաստաթղթերը/ եւ քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող անձի անձը հաստատող փաստաթուղթը թարգմանվում են հայերեն լեզվով՝ օրենքով սահմանված կարգով:

ՀՀ-ում օտարերկրյա քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց, օտարերկրյա պետությունում մշտապես բնակվող ՀՀ քաղաքացիների միմյանց եւ ՀՀ քաղաքացիների հետ ամուսնության գրանցման մասին թույլտվությունը սահմանված ժամկետից շուտ ստանալու համար անհրաժեշտ է վճարել կառավարության որոշմամբ սահմանված լրացուցիչ արտաբյուջետային գումար հետեւյալ դրույքաչափերով՝ մեկից-երկու աշխատանքային օրվա ընթացքում. օրը որոշվում է դիմողների ցանկությամբ 150.000 ՀՀ դրամ, երեքից-հինգ աշխատանքային օրվա ընթացքում. օրը որոշվում է դիմողների ցանկությամբ. 120.000 ՀՀ դրամ, յոթերորդ աշխատանքային օրվա ընթացքում 50.000 ՀՀ դրամ:

ՀՀ արդարադատության նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ամուսնության պետական գրանցումն իրականացվում է դիմումը ներկայացնելու օրվան հաջորդող 10-րդ օրը:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ՀՈԳԵՎՈՐ

ՀԱՐՑ. Ես ուզում եմ իմանալ, թե ի՞նչ են խորհրդանշում թեմի առաջնորդի գավազանի երկու օձերը: Եվ առհասարակ, գավազան ունենալու իրավունք ո՞ր հոգեւորականներն ունեն:

Նարինե Հովհաննիսյան (36 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Ն. Հովհաննիսյանի հարցին ի պատասխան՝ Եկեղեցու առաջնորդը Վեհափառից հետո հոգեւոր հովիվն է: Նա պատասխանատու է մի շրջանի կամ երկրի եկեղեցիների եւ հոգեւոր կյանքի համար: Հովվական ասան (ցուպը) կրում են կաթողիկոսները, պատրիարքները եւ հոգեւոր առաջնորդները: Երկգլխանի օձագլուխ գավազան ունեն նաեւ վարդապետները, որոնց, ըստ մեր եկեղեցու ավանդության՝ քարոզելու եւ Ս. Գիրքը մեկնաբանելու իրավունք է տրված: Գավազանի վրա պատկերված օձերն իմաստություն եւ խոհականություն են խորհրդանշում, ըստ Քրիստոսի այն պատվերի՝ «...Այսուհետեւ խորագետ եղեք օձերի պես եւ միամիտ՝ աղավնիների նման» (Մատթ. 10:16): Խորագետ բառն այստեղ պետք է հասկանալ ոչ թե հնարամիտ, այլ խոհուն իմաստով:

Օրհնությամբ՝ Տ. Տաթեւ արքեպիսկոպոս Սարգսյան

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Շատ հետաքրքիր եւ յուրատեսակ մեկնաբանություն է տրված: Յուրաքանչյուր քրիստոնյա պարտավոր է իմանալ հոգեւոր նմանատիպ խորհրդանիշների իմաստը:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ «Ժողովուրդ» օրաթերթի



ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

№ 2/169-2025

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ԲԱԺԻՆՆԵՐԻ ՊԵՏԵՐՆ

Հարգելի գործընկեր,

Երեւանի քաղաքապետարանում ստացվում են ահազանգեր՝ Կանանց միջազգային օրվան ընդառաջ դրամահավաքների իրականացվող դրամահավաքի դեպքերի վերաբերյալ: Ելնելով վերոգրյալից՝ խնդրում եմ, որ անհրաժեշտ է ձեռնարկել միջոցներ՝ բացառելու դրամահավաքի դրսեւորումները՝ ապահովելով մանկապարտեզների անձնակազմերի եւ ծնողների պատշաճ իրազեկում արգելքի մասին:

Երեւանի քաղաքապետարանի աշխատակազմի հանրակրթության վարչություն

ArmLur.am-ի տեղեկություններով՝ Երեւանի քաղաքապետարանի աշխատակազմի հանրակրթության վարչությունը հրաման է ստորագրել, ըստ որի՝ Երեւան քաղաքի վարչական շրջանների կրթության, մշակույթի եւ սպորտի բաժինների պետերին հրահանգվել է հետեւողական լինել, որ Կանանց միջազգային օրվան ընդառաջ դրամահավաքներ չիրականացվեն: «Քաղաքապետարանում ստացվում են ահազանգեր՝ Կանանց միջազգային օրվան ընդառաջ իրականացվող դրամահավաքի դեպքերի վերաբերյալ: Ելնելով վերոգրյալից՝ հիշեցնում ենք, որ անհրաժեշտ է ձեռնարկել միջոցառումներ՝ բացառելու դրամահավաքի դրսեւորումները՝ ապահովելով մանկապարտեզների անձնակազմերի եւ ծնողների պատշաճ իրազեկում արգելքի մասին»,- նշված է հրամանում:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

2011 Ժողովուրդ 1
www.armlur.am

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	-15 - 20 -4 - 7
Կոտայքի լեռներ	-15 - 19 -5 - 7
Կոտայքի նախալեռներ	-6 - 10 -1 - 3
Գեղարքունիք	-16 - 20 -6 - 8
Լոռի	-10 - 15 -3 + 1
Տավուշ	-5 - 8 -2 + 2
Արագածոտնի լեռներ	-16 - 20 -6 - 10
Արագածոտնի նախալեռներ	-6 - 9 0 - 3

Արարատ	-4 - 7 0 + 2
Արմավիր	-6 - 9 0 + 3
Վայոց ձորի լեռներ	-15 - 20 -6 - 9
Վայոց ձորի նախալեռներ	-6 - 11 0 - 3
Սյունիքի հովիտներ	-5 - 9 0 - 4
Սյունիքի նախալեռներ	-12 - 17 -2 - 5
ԼՂՀ	-11 - 15 -2 - 4
Երեւան	-5 - 9 -4 - 4

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **3.3.2025**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*